

էկու տեսիր, ի՞նչ խօրոտիկ ա, չէ՛յ Նա-
րինո,
Նա՛յ-նա՛յ, հօ՛պ-նա՛յ, Փինջանո, ջա՛ն
Նարինո: — — —

Ժողովրդական գրականութեան ամե-
նագեղեցիկ գոհարներից կարելի է համա-
րել «Լուսնակ գիշեր» եւ «Ես մի աղուոր
տեսի» խորագրով դողմարիկ, փոքրիկ սի-
րերգները, որոնց մէջ փայլում է արեւ-
ելեան բանաստեղծութեան ջերմութիւնն
ու պատկերաւորութիւնը: Թէ այդ սիրերգ-
ները, ո՞ր գաւառին են պատկանում,
զժուար է դրականապէս ասել, որովհետեւ
նոյնպէս բարբառները զանազան են: Շատ
հաւանական է նրանք Ալաշկերտի կամ Շի-
րակի վառվուն եւ գունագեղ երեւակայու-
թեամբ օժտուած հայ ժողովրդի ստեղծա-
դործութիւններն են: Գլխաւորապէս կրում
են այդ գաւառների ժողովրդական բանա-
հիւսութեան յատուկ ոճն ու կնիքը: Ահա
այդ փոքրիկ սիրերգները.

Լուսնակ գիշեր,
Շամամ ծծեր.
Գացի տեսայ,
Թոնիր կշտին,
Եարս նստած՝
Թեւեր սօթած՝
Ալուր մաղէր,
Զուխու⁶⁴ շամամը
Գօշին⁶⁵ իսաղէր:

Կամ՝

Ես մի աղուոր տեսի,
Աչքերը նման ծովի.
Բանզը⁶⁶ վարդ-արեւի,
Արելից էլ աղուոր տեսի:

Յօնքերը զոյտ աղեղ,
Բուրմունքը վարդաեղ.
Պոօշը⁶⁷ շաքարով լի,
Բերանից մեղը կու թափի,
— էղ աղուորը ինձ եար արի:

Այս թանկադին փշրանքները գրի ա-
մինք 1917 թուին, Նոր-Զուղայում, Ալաշ-

⁶⁴ Զոյտ:
⁶⁵ Կուրծք:
⁶⁶ Գոօշ:
⁶⁷ Շրթերը:

կերտցի Վարդգէս Արրահամեան անունով
անդրագէտ մի գեղջուկից, որ երկար տա-
րիներ ապրել է Վանի, Խնուսի եւ Ապարանի
գաւառամասերում: Նա անդիր է երգում
ժողովրդական մի շարք երգեր եւ պատմում
հէքեաթներ, առասպելներ ու պատմու-
թիւններ:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



ՂԱՐԱԲԱՂԻ ԲՈՐՔԵՐԻՆ

Ա.

Ղարաբաղցիների օրինութիւնը:

Ազգու որհնվի, տիլարի¹,
Աղբաթղ իներ ինի.
Անըմըտ մծանա,
Աչքու լուսաւ կենա.
Աստուծ պահի քեղ,
Աստուծ օրհնի քեղ
Ասծու աչքին քաղցը իրեւաս
Աստուծ զորմի քու հօրն ու մօրը.
Աստուծ քեղ մին զալալ ծծկեր նստիր անի.
Աստուծ քեղ մին զոչ վերթի տա
Աստուծ օխարս կտարի
Աստուծ քեղ շատ ժառանդ տա,
Բալեքու ապրին,
Բախտավեր ինիս²,
Բինալ ավաղ ինի³.
Եաշըտ⁴ շատ շատ ինի
Եկըտ⁵ համեշտ առատ ինի
Եղ ու մեղրտ բոլ ինի
Զրթարգած ինիս համեշտ,
Զրավար⁶ ինիս
Եշխալ ժառանդ ինիս.
Երվի գուշմնդ
Էստուծանտ մխիթարիս
Թաշախտուսդ պեցուր ինի,
Ժառանդդ բարի ինի.
Իխտիարդ շատ ինի,
Իրավունքդ շատ ինի.

¹ Աչքու:

² Լինիս:

³ Լինի:

⁴ Կեանքը:

⁵ Բերքու, եկամուռ:

⁶ Զօրեղ:

Լաւ ինի համեշա քեփու,
Լուղուտ քաղցր ինի,
Լուղուտ ճարտար ինի.
Խաչը քեզ պահապան ինի.
Խաչը քեզ եարքեար ինի.
Խավար օր չտեսնաս.
Խնեցիտ համեշա հարիս
Խոլխեքդ⁸ աստուծ պահի
Խոշավ անց կենա կեանքդ
Խոչ սփաթ ինիս ամեն տեղ
Խոսքդ յերբքմիշ⁹ ինի.
Խորհուրդդ բարի ինի.
Ծաղկիս, ծլիս,
Ծիծալդ պրանադ վեչ պկասի,
Ծոցդ վեսկաւ լիգը¹⁰ ինի
Կանանչ կարմուր կապիմ վզիու.
Կեր ու խումբտ վեչ պկասի.
Կեանքդ աստուծ որհնի,
Կնեգդ քեփավտ ինի.
Կվազանբտ վեսկի ինի, ձիտ քեոհան.
Հախկ աստուծը բարաքեաթ տա տանդ.
Հանդս¹¹ առատ ինի.
Հաստատ ինիս ասծու հրդբցըմը¹²
Հացդ բոլ ինի,
Հափուրտ¹³ վեսկաւ լիգը ինի
Հաշղա ինիս խալիսին մաշին¹⁴
Հիմքդ աստուծ որհնի,
Հունձդ, կալբդ առատ ինի.
Հորաւ, մորավ ինիս,
Հուքիս լուս տեսնա.
Հուքիս արքայութիւն քինա,
Հրկավեր ինիս ամեն տեղ.
Հրսանեքնե շատ տեսնաս.
Ղաղադ դուշմանին ջանին.
Ճնապարտ բարի ինի,
Ճիրագդ վառ կենա.
Ճտերդ ապրին,
Մեծ ինիս ամեն տեղ.
Մեղրու նման քաղցր ինիս,
Մրոքդ սիպտակի,
Շնորքդ շտանա.
Պակասթուն չտեսնաս,
Պաշարդ առատ ինի
Պասդ չնհավեր ինի,
Պատիվդ շտանա,

Պատվավեր ինիս.
Պարի ժառանդ ինիս.
Պարով վասակվիս,
Պարով կարմուրըտ կապիս,
Զանդ սաղ, ինի,
Սաղ, որախ ինիս,
Սերըտ, սովորդ մարթիդ նհետ անթառամ
ինի:
Սեւ օր չտեսնաս,
Սիրտդ քոն¹⁵ կենա
Սուրփերը քեզ պհապան,
Սրտիդ ողածը աստուծ տա,
Ռուզիդ անպակաս ինի.
Վախտդ համեշա խոշ ինի,
Վերսդ հաջող ինի.
Վերդ համեշա ալչու կաղնի¹⁶
Տանդ մին սուրու խոխա տեսնաս,
Տաֆիրդ¹⁷ ապրի
Տէրը քեզ պհապան
Տժեր¹⁸ օր չտեսնաս,
Տնդեկիննդ¹⁹ պարի ինի
Տվիրատ լցաւ խեր տեսնաս.
Ցամաք չմնա թիքատ,
Ցավ չտեսնաս,
Ցավդ տանիմ,
Ցավդ դուշմանին ջանին.
Փառքավ ինիս,
Փափաքդ աստուծ կտարի,
Փափուկ ոտիս, դինչ ապրիս,
Փոնած պեսատ խեր տեսնաս.
Քեփդ համեշտ քոք ինի,
Քեփդ քոք ինի, դամազդ չաղ:
Քու հոր հոքին լուս տեսնա,
Քու հար, քու մար օրհնվին:
Քուհար ապրած կենա,

Բ.

Ղարաբաղցիների անէծքը:

Աստուծ կլիխտ կա²⁰
Ազգդ չուրանա,
Անդունդն վեր ընկնիս
Անժառանդ մնաս,
Աչքդ տուս կա,
Աչքերդ վեր տեսնան.

⁷ Խնոցի:⁸ Երեխայքդ:⁹ Անցնի:¹⁰ Լիք:¹¹ Հանդ, արա:¹² Ճանապարհին:¹³ Բուռ:¹⁴ Մեջ:¹⁵ Զուարիթ:¹⁶ Կանգնել:¹⁷ Տագր:¹⁸ Գժուար:¹⁹ Տանտիկին:²⁰ Խփել:

Աչքու տրաքի ,
 Աչքու պլթա
 Աչքու քուռանա ,
 Աչքու գուլլա նի կա .
 Աստուծ ջանդ առնի ,
 Աստուծ կլինիդ խռավ կենա ,
 Ասծու բլեն կաս
 Ասծու նահզաթին կաս ,
 Ասծու աչքան ընկնիս ,
 Արեւըդ խվարի ,
 Բալադ մեռնի ,
 Բալալարըտ կուտորվին .
 Բախտըդ սվանա ,
 Բոյըդ տափը կոխիմ ,
 Բոյըդ թիւ չափիմ .
 Գուլլաթակ ինիս ,
 Գուլլա նի կա ջիգարիդ ,
 Գաղերդ եր ինին .
 Դիվանըտ աստուծ անի ,
 Եղը մոխեր տեսնաս :
 Երիշըտ աստուծ կտրի ,
 Զաթդ աստուծ կտրի ,
 Զաթդ ընեծվի ,
 Զինջիւաւ կապած չոն ,
 Էշու քոռակ ,
 Էշու ջինս ,
 Էշու քալլա .
 Էրվիս խրավիս ,
 Էնըխեվիր ²¹ չոն ,
 Թախդա տերտակ մնա ,
 Թեղունքդ տափավը կա .
 Թեղերըտ կուտրատվի ,
 Թոքիդ գուլլա նի կա ,
 Թոքըդ ծկծկոտվի .
 Ժառանդդ եթիմ մնա ,
 Ինսանու ²² լակուտ
 Լակըդ չոն լակի ,
 Լեշըտ կուլ ²³ ոտի
 Լեփդ չոն ոտի ,
 Լկկոտվիս , ծկծկոտվիս .
 Լղետ պտառի ,
 Լուղուտ ծիծկոտվի ,
 Լուղուտ չուրանա ,
 Լուղուտ պանձվի ,
 Լուն եր ինիս , ասեղը կըվաղան չինիս .
 Լուսըտ խվարի ,
 Խոր քինաս տու ,
 Խոկիս տու ,

Խանձվի ետ ջանըդ
 Խանշալտ սերտի մննի .
 Խաչը գլխիտ խոավ կենա .
 Խալար մնաս ,
 Խմորդ քցախի .
 Խնչըխարաւ ինիս ,
 Խոխատ թորինը ընկնի .
 Խուխա հասրաթ մնաս ,
 Խոոկը պկատ կենա ,
 Խըլլ խարաւ կյաս ,
 Ծամերդ կտորիմ ,
 Ծծերդ յամուն ոնի ,
 Ծկծկոտվիս .
 Ծոցդ ոց մննի .
 Ծտու նման ծվծվաս ,
 Կաշիդ ծկծկոտվի ,
 Կաչիդ կուլ պուք տա ,
 Կաչիդ պլոկիմ ,
 Կլոխար թաղիմ ,
 Կլինիս մատաղ ինիս ,
 Կլոխըտ մոշիմ ,
 Կլոխըտ մոխրիմ ,
 Կլինիտ նի կա ,
 Կլոխուդ մեռնի ,
 Կլոխուդ կուլ ոտի ,
 Կնոնքա հասրաթ մնաս ,
 Կնձկոնձաս շան նման .
 Կոնդդ թաղիմ ,
 Կրակ ընկնի ջանդ ,
 Կլիցավավա վեչ պրծնիս ,
 Կերպկ ծաղեկ տանի ,
 Հորաւ , մորաւ յեթիմ մնաս .
 Հուքիտ ստանան տանի ,
 Համեշա կրակըմ կեանս ,
 Հացըդ կորեկ ինի ,
 Հասրաթ մնաս թազա չորի ,
 Հարյիդ հանող չինի ,
 Հարամի մննի տոնդ ,
 Հացըմըտ չները լկըտոտին .
 Հախմիան տերը դազարանի անի քեզ
 Հարաչի տեսնաս , դռներն ընկնիս ,
 Հարիբոթունըմ մեռնիս ,
 Հուքուզուշ ջամդաքտ ոտի ,
 Ղերաթդ աստուծ կտրի ,
 Ճարդ աստուծ կտրի ,
 Ճար չքթնիս ցավիդ մհար ²⁴ .
 Ճվարանաւ ջուր կրիս .
 Ճնապարըտ համեշա կապված ինի
 Ճանձերը ոտին քեզ ,

²¹ Ազահ :²² Անասուն :²³ Գայլ :²⁴ Համար :

Ճանձու փայ ինիս .
 Մեռնիս , փշանաս
 Մարթղ մեռնի , անտէր մնաս .
 Մոխրվիս դու ,
 Մորեխ ոտի քեզ .
 Մեսըտ կուլ ոտի ,
 Մասնու արժանի չինիս
 Մեսըտ եր թափի ,
 Մնընուցում ճխարակ մանիս ,
 Մրչեմնը եր ինիս , Մարաղա քինաս .
 Մոկնը տեսնաս , կատուն ըոբխի քեզ .
 Միչքտ կոտրվի .
 Մաչըտ կուլ տուս տա ,
 Նափասըտ կտրվի .
 Նեղում մնաս համեշա ,
 Նահլաթ աղգիդ ,
 Նետը սրտադ կենա ,
 Նուրարու հասրաթ մնաս ,
 Շնըսատակ ինիս .
 Շան պունըմ սատկիս ,
 Շամփուր կոր տաս ,
 Շանը հակոավ ջուր խմիս ,
 Շան նման կտադիս ,
 Շնրկոտիկ , չնըլակուտ ,
 Շեմքավտ հարամի մննի ,
 Շենքդ փոր կա տակին մնաս ,
 Զանդալլ պոկըտ ,
 Զամիչը օխտը հետ կծիս ,
 Զուրանաս աղգաւ , աղգանդանաւ .
 Զանդ տեսնաս ,
 Զառ ոնի քեզ ,
 Զոռլամիչ ինիս ,
 Զար ա կուրծանվիս .
 Զաթուն պոկըտ ,
 Զըքորը մեռնիս , զատիկ չտեսնաս .
 Զար աչքտ տրաքվի ,
 Պլորը պկատ կենա ,
 Պոկդ չուրանա ,
 Պկիս խռոդ վեր կա .
 Պոկըտ թանափ խեղդի ,
 Պլանաս մհսըտ ոտիս ,
 Պատդ կլիխտ պարան կա ,
 Պակասըտ չըդուղվի ,
 Պոչերդ կտորիմ ,
 Զամդաքդ կուլերն ոտին ,
 Զին ջանավար փորտ տուս տան .
 Զհաննամին փայ ինիս ,
 Զանդ վերկալի ,
 Զանդ դուա կա ,
 Զանդ ծկծկոտվի , լկլկոտվի ,
 Զանդ եաման ոնի ,

Զանջալի մաչ ²⁵ մնաս .
 Զինդարու ձեռքի մեռնիս ,
 Զանիս մատադ ինիս ,
 Ռեխոդ ծովի ,
 Ռեխոդ չոն հսնի ,
 Ռանգըտ սվանա ,
 Ռադիլ ջհաննամը կորի ,
 Ռուզիտ աստուծ կտրի ,
 Սփաթդ վեր գինի ,
 Սփաթդ աստուծ կտրի ,
 Սերտ ճլորի ,
 Վարսդ կորիմ ,
 Վեր ընկնիս փքլիս ,
 Վայիդ նստիմ ,
 Վառվիս արավլամիչ ինիս .
 Տոնըտ միանտերը քանդի ,
 Տոնըտ սունդ տեսնա ,
 Տոնըտ պարան կա , սել տանի ,
 Տոնըտ հարամի մննի ,
 Տոնըտ թալան ինի ,
 Տոնըտ պրիշակ ²⁶ տեսնա .
 Տափը կաս տու ,
 Տափին նհետ մվըսարվիս .
 Տղատ թուրքանա , աղջիկդ թուրք տանի .
 Տերը գիվանըտ անի ,
 Տվարու նման պռանչիս ,
 Տափը քեզ տեղ չտա .
 Տանջիս , չըչարվիս համեշա ,
 Տեզ ²⁷ տեսնաս շանան կենաս .
 Տափը թումբ անիս .
 Տոնդ փրսըլերվի .
 Տխտակու հապեմ քեզ .
 Տալս քաղիս տու .
 Տալիս դեարման չձարիս ,
 Տալիս մեչքատ կենա տարին 12 ամիս :
 Ցիրթդ նզովիս ,
 Ցիրթիդ չոն հսնի .
 Փուրայաւ ընկնիս ,
 Փորըտ մեչքադ կենա ,
 Փորըտ կուլ ²⁸ տուս տա ,
 Փոխհորդու հասրաթ մնաս ,
 Փոխանըտ կրակ ընկնի ,
 Փելին ոտիս հացու տեղ ,
 Ճոխտ աչքաւ քուռանաս .
 Քար ընկնի գլխիս ,
 Քերծն ի վեր ընկնիս .
 Օցը կծի քեզ ,

²⁵ Մէջ :²⁶ Աղբակ :²⁷ Տիզ :²⁸ Գայլ :

Օյը վզավըդ պատ ընկնի,
Օյը կծի քեղ,
Օխճին լղին խմիս,
Օձը լուղուտ կծի,
Օխտը մարդի քինիս, վեչ միսթարվիս,
Օխընի կա ջիգարիդ,
Օշափ կու տա քեղ:

Շամօքուրին. — Ղարաբաղի օրհնութիւնը եւ անէծքը հաւաքել է Աղեքսանդր Կարապետեան Մելիք Շահնազարեան Շուշեցի: Նա մի երկու տարի Շուշի գաւառային դարպացում սովորելով, թողել է եւ ժուել ծառայութեան եւ պարապել ինքնակրթութեամբ: Նա եղել է երկար տարիներ մաքսատան կառավարչի օդնական. եւ յետոյ կառավարիչ Պարսկահայ Թումանեանների առեւտրական տան Ղարաբաղի կալուածների մօտ 20 տարի, որտեղ մի օր անտառի միջով ձիով անցնելուց ծափ մի ճիւղ աչքին դիպելով կուրանում է բոլորովին 1905 թ: Նա ունի մօտ 300 երես 436 տողից բաղկացած ոտանաւորներ, զանազան բովանդակութեամբ 1870 թուից սկսած մինչեւ այժմ: Նա 80 տարեկան է, առողջ կազմուած քով, թուղթը դնում է առաջը ձափառում գրում մատիտով, յետոյ իր դուստրներից մէկը արտագրում է նրա թելադրութեամբ:

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ



ՑԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԸՒՅՉԱՆ

առ — առուակ: — լ — լեռ: — լշ — լեռնաշղթայ:

(Շարունակութիւն:)

ԺԳ.

Իշկալա եւ Բէհեկվան վատակները:

Մուրզուից ցած, դէպի հիւսիս Բորչիսա, Բերդ գիւղերի եւ Ցիտուրեաի աւերակների մօտ Ճորոխին խառնուում Խչկալա (միջնաբերդ) առուակը որ իշնում է Եանդունի, Սառուղուրդի եւ Ցկարեստի լ-րից, ակունքում անուանուում է Պալլի (ձկնոտ) կամ Խուրշիդ (արեւածկնային): Այս առուակը ընդունում է Զէյլին, Զատ, Զիլտէ Քէօփի, Դից-գեղ (Դիզքէօյ), Մաքրիէտի, Կոստանէի առուները, որոնք ոռոգում են համանուն գեղերն եւ նրանց պարագաների հանդերը: 1872ի քարտէզի վրայ այս վատակն

անուանուում է Զայիր-սու (մարգերի առուակ) այն ընդարձակ Մարգերի անունով, որ պատած են վտակը, իրենց մշտագալարով եւ գեղն էլ անուանուում է Մարգագետին (Մակրիետի): Այս վտակի մէջ թափուում են Գուրչատի, Բաշքեյօյ (գլխաւոր գեղ) առուակները ձախից, Ազուրյ, Պանչուրեստ, Մամանիտ՝ աջից, որոնք միանալով Մարգաստանում կուտակուած ջուրին՝ խառնուում են Ճորոխին:

Իշկալա անունն առաջացել է վտակի ակունքից ո՞չ շատ հեռու բարձունքի վրայ հիմնուած բերդից-միջնաբերդից, պարսպից եւ երկու հին մեծ քարէ կամուրջներից, որոնք գարեւոր անցեալ ունին: Անշուշտ այս կալուածքը երկրորդական, երրորդական իշխանի յատուկ չէնք ու կառուցուածք չէ՝, այլ առաջնակարգ, թագաւորական տանն է պատկանել, մինչեւ որ պեղումներ չկատարուին, չի պարզուել իշկալայի եւ Մակրիէտի անունները: Իշկալա վտակը մօտ 15 կիլոմետր երկարութիւն ունի, Ցկարեստի լեռների բարձունքը կազմում է սրա եւ Խոփայ վտակի ջրբաժան գիծը, որի երկարութիւնը հազիւ թէ տասը կիլոմետր լինի, իսկ Ճոլից հեռաւորութիւնը ընդ ամէնը 7—8 կիլոմետր է:

Իշկալա վտակից 12 կիլոմետր ցած Ճոլին են թափուում Զալօնա եւ Բեհեկվան լեռներից իջած Բեկիլվան վտակի ջրերը, որոնք բղիսում են Կվախերիսի լ-րից Մեւ Շովի ափերից 6—7 կիլոմետր հեռաւորութեամբ, Մակրիալ վտակի բարձունքից: Բեհեկվան գեղը, լեռը, վտակը, անցքը 1872ի քարտէզի վրայ Պակաւան է տպագրուած. իսկ ժողովուրդը կանչում է Փէհէվան: Տարակոյս չկայ, որ հիւանդու ուղեղները փոփոխուում են այս անունները քաղաքական ինչ-ինչ նկատումներով: Իսկ գիտութիւնը մինչեւ օրս պեղումներ չէ՝ կատարել, որ վերջ տայ ճշմարտութեան առաջ ամէն տեսակ կեղծիքներ երեւալուն: Փէհէվան վտակի նախնական բազուկը իջնում է Եանդունի (Հրդեհուած—գուցէ Հրաբրիսային) լեռներից, որն այս օր Զէրիա անունն է կրում եւ սրանից աւելի ցած 2 կիլոմետր հեռաւորութեամբ գտնուում է Գիդրիվետ գեղը իր բաղմաթիւ աւերակներով: Փէհէվան վտակի, Փէհէվան առուակի վրայ, Փէհէվան լեռան ստորոտում գտնուում են Փէհէվան բերդ ամբոցի աւերակները, սրանց մօտ է